

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 6-ին

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՈՒՆԱԳԱՂԹՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մույն օրենքը սահմանում է 1988-1992 թվականներին Աղբրեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավունքների իրականացման և օրինական շահերի պաշտպանության իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքները:

Հոդված 1. Օրենքի գործողության շրջանակը

Մույն օրենքի գործողությունը տարածվում է 1988-1992 թվականներին Աղբրեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց վրա:

Հոդված 2. Բնակարանային ապահովության իրավունքը

Բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Զբաղեցրած բնակելի տարածքների նկատմամբ վարձակալ ճանաչելը

Համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքներում երեք տարուց ավելի բնակվող՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք սահմանված կարգով ճանաչվում են վարձակալ իրենց զբաղեցրած տարածքների նկատմամբ, եթե այլ անձինք դրանց նկատմամբ չունեն վարձակալության և այլ իրավունքներ:

Հոդված 4. Հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը

Պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են դրանցում երեք տարուց ավելի բնակվող՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց:

Սեփականաշնորհման կարգը և սեփականաշնորհման ենթակա հանրակացարանների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. Ժամանակավոր կացարաններում բնակվողներին տրվող արտոնությունները

Ժամանակավոր կացարաններում (հյուրանոցներ, հանրակացարաններ, հանգստյան տներ, պանսիոնատներ, առողջարաններ և այլն) բնակվող՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք ազատվում են բնակության համար սահմանված վարձը վճարելուց, բացառությամբ էլեկտրաէներգիայի և կոմունալ ծախսերի: Նրանց բնակվելու հետևանքով ժամանակավոր կացարանների կրած հաշվեկշռային վնասը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 6. ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՂԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Աղբբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց Աղբբեջանի Հանրապետությունում թողած գույքի դիմաց փոխհատուցումների հարցը լուծելու դեպքում փոխհատուցվում է նաև բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց գույքի արժեքը:

Հոդված 7. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

Երևան
27 դեկտեմբերի 2000 թ.
ՀՕ-120